Մրցույթ ՀՀ Սյունիքի մարզի «Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Շվանիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ռուսաց լեզվի (8 դասաժամ, սահմանված գումարը՝ 47.840 դրամ), օտար լեզվի (անգլերեն-18 դասաժամ սահմանված գումարը՝ 107.640 դրամ), կերպարվեստի (7 դասաժամ սահմանված գումարը՝ 41.860 դրամ), ինֆորմատիկայի և ԹԳՀԳ-ի (6 դասաժամ, սահմանված գումարը՝ 35.880 դրամ), ֆիզիկայի (8 դասաժամ, սահմանված գումարը՝ 47.840 դրամ), կենսաբանության (6 դասաժամ, սահմանված գումարը՝ 35.880 դրամ), ֆիզկուլտուրայի (19 դասաժամ, սահմանված գումարը՝ 113.620 դրամ), տեխնոլոգիայի (3 դասաժամ, սահմանված գումարը՝ 17.940 դրամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3X4 չափսի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
4. «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն (Ձև 5),
6. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
9. որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում, եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են **2024 թ-ի հունիսի 12-ից** մինչև **հունիսի 25-ը** ներառյալ, ամեն օր ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2024 թ. հունիսի 28-ին, ժամը 10:00-ին**, Սյունիքի մարզի Շվանիձորի միջնակարգ դպրոցում:

Հասցե՝ գ. Շվանիձոր, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք, շենք 4:

Տեղեկությունների համար զանգահարել (0286) 95-431, 098089202 հեռախոսահամարներով: